

## Հաշվետվություն

### Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2015թ. առաջին եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ

#### Գյուղատնտեսություն

Բնակլիմայական բարենպաստ պայմանները հնարավորություն տվեցին գարնան գյուղատնտեսական աշխատանքները սկսել ժամանակին: Այս տարի կանխատեսվում է ցանքատարածությունները ավելացնել 908 հեկտարով, հասցնելով 5599 հեկտարի: Այսօրվա դրությամբ կատարվել է 750հա գարնանացան հացահատիկի ցանք, այդ աշխատանքները շարունակվում են: Ավարտին են մոտենում խաղողի ու պտղատու այգիների էտի ու ձևավորման աշխատանքները:

Տարեսկզբին համայնքների կողմից ներկայացված հայտերի հիման վրա ճշտվել է պետական աջակցության ծրագրերով մարզի հողօգտագործողներին անհրաժեշտ պարարտանյութերի, դիզելային վառելանյութի և սերմացուների վճարունակ պահանջարկը և ներկայացվել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

Ըստ ներկայացված հայտի մարզին հողօգտագործողներին անհրաժեշտ է՝

-Ազոտական պարարտանյութ	420 տ
-Ֆոսֆորական պարարտանյութ	6.75տ
-Կալիումական պարարտանյութ	7.75տ
-Դիզելային վառելանյութ	250500լ
-Գարնանացան գարու սերմացու	77.1տ
-Առվույտի սերմացու	2.65տ
-Կորնզանի սերմացու	9.4տ
-Եգիպտացորենի սերմացու	0.325տ
- Աշնանացան ցորենի սերմացու	84տ

Սերմացուները ժամանակին ներկրվել և բաշխվել են հողօգտագործողներին, առաջացել է ևս 10 տոննա գարնանացան գարու սերմացուի պահանջարկ, որը բավարարվել է :

Ցանքատարածությունների ավելացման նպատակով սահմանամերձ համայնքների սոցիալապես անապահով գյուղացիական տնտեսություններին անվճար տրվել է 37 տոննա գարնանացան գարու, 630կգ առվույտի և 30կգ եգիպտացորենի սերմացու:

\_ Ներկրված 87.1տ գարնանացան գարու սերմացուի վճարման ենթակա 11 323 հազ.դրամ, գումարից մատակարարի հաշվեհամարին է փոխանցվել 10580 հազ.դրամ, մնում է վճարելու 743 հազ.դրամ :

\_ Ներկրված 2.65տ առվույտի սերմացուի վճարման ենթակա 3975 հազ.դրամ, գումարից մատակարարի հաշվեհամարին է փոխանցվել 2787 հազ.դրամ, մնում է վճարելու 1188հազ.դրամ:

- Հայտով ներկայացված 9.4տոննա կորնզանի սերմացուից, վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով ներկրվել է 5.6տոննա, որի վճարման ենթակա 2072 հազ. դրամից, մատակարարի հաշվեհամարին է փոխանցվել 772հազ.դրամ, մնում է վճարելու 1300 հազ.դրամ:

- Ներկրված 0.325տ եգիպտացորենի սերմացուի վճարման ենթակա 113.75 հազ.դրամ, գումարից մատակարարի հաշվեհամարին է փոխանցվել 43.75 հազ.դրամ, մնում է վճարելու 70 հազ.դրամ:

- **հայտով** ներկայացված 420տոննա ազրոտական պարարտանյութից ներկրվել և շահառուններին է բաշխվել 320տոննա, վճարման ենթակա 38400հազ.դրամից մատակարարի հաշվեհամարին է փոխանցվել 34908 հազ.դրամ, մնում է վճարելու 3492 հազ.դրամ:

- հայտով ներկայացված 6.75 տոննա ֆոսֆորական և 7.75 տոննա կալիումական պարարտանյութերից ներկրվել է 4.65 տոննա ֆոսֆորական և 7.75 տոննա կալիումական պարարտանյութեր, որոնց դիմաց վճարման ենթակա 1736հազ.դրամը ամբողջությամբ վճարվել է:

Հատկացված 250500լ դիզելային վառելանյութից ներկրվել է 17200լ: Գործընթացը շարունակվում է :

### **Անասնապահություն**

Ըստ 2015թվականի հունվարի 1-ի անասունների համատարած հաշվառման տվյալների մարզում առկա է.

- խոշոր եղջրավոր անասուն - 22578 գլուխ, որը 142 գլխով ավել է նախորդ տարվանից,
- մանր եղջրավոր անասուն - 24824 գլուխ որը 1789 գլխով ավել է նախորդ տարվանից
- խոզեր - 2048 գլուխ որը 335 գլխով ավել է նախորդ տարվանից
- թռչուններ 139439թև, որը նախորդ տարվա համեմատ ավել է 79419թևով:

Հաշվետու ժամանակահատվածում պետ պատվերով նախատեսված վարակիչ հիվանդությունների դեմ կանխարգելիչ նպատակով պատվաստվել է 48025 գլուխ խոշոր եղջրավոր կենդանի: Բրուցելյոզի նկատմամբ ախտորոշիչ նպատակով հետազոտվել են 6569 գլուխ խոշոր և 5403 գլուխ մանր եղջրավոր կենդանիներ, որի արդյունքում հայտնաբերվել են բրուցելյոզով հիվանդ 9 գլուխ խոշոր և 46 գլուխ մանր եղջրավոր կենդանիներ:

**<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>>** ծրագրով մարզի քսան համայնքներում տեղի են ունեցել ժողովներ՝ ծրագրին ծանոթացնելու և կոոպերատիվներ ստեղծելու նպատակով: Ռինդ և Վերնաշեն համայնքներում հիմնադրվել են կոոպերատիվներ ,որոնք գրանցվել են:

Սարավան, Աղնջաձոր, Զառիթափ, Ազատեկ համայնքներում տեղի են ունեցել կոոպերատիվների հիմնադիր ժողովները:

**Մարզի** համայնքներում առկա մեքենաները, տրակտորները և գյուղատնտեսական գործիքները հիմնականում ֆիզիկապես ու բարոյապես մաշված են, վերջին երեք տարիներին գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող ընկերությունների կողմից ձեռք են բերվել ընդամենը 22 միավոր տարբեր հզորության տրակտորներ իրենց գյուղ. գործիքներով: Սարավան համայնքը ձեռք է բերել նոր հացահատիկահավաք կոմբայն, S-150 անիվավոր տրակտոր՝ կցվող գործիքներով և խոտի մամլիչ: Աշխատանքներ են տարվում Սարավան համայնքում մեքենատրակտորային պարկի ընդլայնման ուղղությամբ, որը հնարավորություն կտա սպասարկել նաև հարևան գյուղերի գյուղացիական տնտեսություններին: Գնդեվազ համայնքում կոմբայնի գնման գարծընթացը վերջնական փուլում է :

<<**Եղեգնաձոր**>> ԶՕԸ-ի կողմից վերանորոգվել և մաքրվել են միջտնտեսային և ներտնտեսային նշանակության բոլոր ջրանցքները և պատրաստ են ոռոգման սեզոնին:

<<**Հայկական միրգ**>> ծրագրով Ազատեկ համայնքում 12 հեկտարի համար ստացվել են սալորենու և դեղձենու տնկիներ, 5 հեկտարը արդեն տնկվել է : Վերնաշեն համայնքում 4հա և Խնձորուտ համայնքում 5հա հողերի նախապատրաստական աշխատանքները ավարտվել են:

ACBA CREDIT AGRIKOLE բանկի կողմից սկսվել է գյուղացիական տնտեսություններին գյուղատնտեսական նշանակության պարզ և սուբսիդավորված վարկերի տրամադրումը:

### **Բնապահպանություն**

Ուսումնասիրվել են մարզի տարածքում բնապահպանական խնդիրները և կազմվել են համապատասխան ծրագրեր ու առաջարկություններ խնդիրների լուծման և շրջակա միջավայրն աղտոտումից զերծ պահելու ուղղությամբ:

Համակարգվել է մարզի տարածքում գործող անտառտնտեսությունում տարվող աշխատանքները՝ անտառների էկոլոգիական և սոցիալական նշանակության բարձրացման, անտառների վիճակի բարելավման, պահպանության, պաշտպանության, ընդլայնված վերարտադրության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Մշտական ուշադրության կենտրոնում է անտառների հակահրդեհային և կանխարգելիչ միջոցառումների ծրագրի իրականացման աշխատանքները:

Ստեղծված հանձնաժողովի միջոցով ուսումնասիրվել է մարզի տարածքում ջրերի և ընդերքի օգտագործման ու պահպանության վերաբերյալ բնապահպանական օրենսդրության պահանջների կիրառման ընթացքը: Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված բացթողումները վերացնելու նպատակով առաջարկվել է ուժեղացնել տեսչական աշխատանքները ջրօգտագործող և ընդերք շահագործող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը բնապահպանական օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Բնապահպանական պետական տեսչության Վայոց Ձորի տարածքային բաժնի կողմից իրականացված տեսչական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վարչական տուգանքի են ենթարկվել 5 հոգի, որից 2 հոգի հողի բերրի շերտի քանդման ու տեղափոխման համար, 2 հոգի ձկնագողության համար և 1 հոգի ապօրինի ծառահատման համար, վարչական տուգանքը կազմել է 250հազ. դրամ, իսկ բնությանը հասցված վնասը՝ 39,2 հազ. դրամ, որը ամբողջությամբ վերականգնվել է:

Բնապահպանական պետական տեսչության Վայոց Ձորի տարածքային բաժնի, մարզային ոստիկանության հետ համատեղ ստուգայցեր են կազմակերպվել մարզի որսահանդակներում, ջրային տարածքներում, անտառներում և համայնքներում, ապօրինությունների կանխարգելման ինչպես նաև հայտնաբերման համար: Հաճախակի ստուգայցեր են կազմակերպվել Եղեգիս և Արփա գետերի վրա կառուցված ՀԷԿ-երի մոտ բնապահպանական թողքերի չափը ստուգելու նպատակով:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն